ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ Մ. ԲԵԼԵՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 4-ՐԴ ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱՆ

Վերջերս տեղի ունեցան ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Աբեղյանի անվան Գրականության Ինստիտուտի 4-րդ գիտական սեսիայի հերթական նիստերը՝ նվիրված սովետական գրականության հարցերին։

Սեսիայի երկրորդ նիստում նախ հանդես եկավ բանասիրական գիտությունների թեկնածու էդ. Թոփչյանը. նրա զեկուցման թեման էր «Սոցիալիստական ռեալիզմի պրոբլեմները»։ -Սովետական գրականության ստեղծագործական մեթոդի,— ասում է զեկուցողը,— սոցիալիստական ռեալիզմի սահմանումը տվել է ընկեր Ստալինը։ Սոցիալիստական ռեալիզմի մեթոդի բնորոշման մեջ խորացվել և կենսագործվել են մարքս-լենինյան էսթետիկայի հիմնական սկզբունքները գեղարվեստական գրականության ռեալիզմի, պարտիականության և ժողովրդային ընույթի մասին։ Ինչպես սովետական հասարակությունն արմատապես տարբերվում է մարդկային պատմության նախորդ դարաշրջաններից, այնպես էլ սովետական գրականությունը և իրականության գեղարվեստական արտացոլման նրա մեթոդը արմատապես տարբերվում է կլասիկ ռեալիզմի ստեղծագործական մեթոդից։

Սոցիալիստական ռեալիզմի նախակարապետը մեր գրականության մեջ Հ. Հակոբյանն է։ Դեմիրճյանի և Զորյանի ստեղծագործությունները ձևավորվեցին նախառևոլյուցիոն հայ գրականության ռեալիզմի անկման պայմաններում։ Սովետական իշխանության գոյության առաջին իսկ տարիներից Դեմիրճյանն ու Զորյանը հաղթահարեցին հոգեբանական ռեալիզմի սահմանափակումները՝ հետագա երենց բեղմնավոր գործունեության ընթացքում տալով մի շարք նշանակալից երկեր։

Սոցիալիստական ռեալիզմի կենսագործման բնագավառում ավելի ցայտուն են սովետահայ պոեզիայի նվաճումները։

Սովետահայ գրականությունն ստեղծել է մեր ժամանակի առաջավոր դաղափարներով տոգորված նշանակալից երկեր, բայց եղած արտադրանքը դեռ հեռու է մեր ժողովրդի էսթետիկական բարձր պահանջները բավարարելուց։ Սովետական ժողովրդի կենսական շահերը պահանջում են, որ գրականությունը բարձրանա նոր աստիճանի, մինչդեռ մեզ մոտ կենտկոմի որոշումներից ամիսներ անց հրատարակվում են մեծածավալ երկեր, որոնք արտահայտում են միանգամայն անընդունելի, արատավոր գաղափարներ։ Սոցիալիստական ռեալիզմը պահանջում է իրականությունն արտացոլել իր ռևոլյուցիոն զարգացման մեջ, իր անընդհատ նորացման ընթացքում։

Այնուհետև նույն նիստում «Դրական հերոսի կերպարը սովետական գրականության մեջ» թեմայով հանդես եկավ բանասիրական գիտությունների թեկնածու ընկ. Ս. Հարությունյանը։ Սովետական գրականության և արվեստի կենտրոնական հարցը,— ասում է զեկուցողը,— դրական հերոսի կերպարը բարձր իդեականությամբ և խորը արվեստով կերտելու հարցն է, հետևաբար սովետական մարդու, դրական հերոսի կերպարի մեկնաբանության խնդիրը դառնում է սոցիալիզմի էսթետիկայի հիմնական խնդիրներից մեկը, մեր գրականության և արվեստի մեջ սովետական մարդու կերպարը իրական, դրական և իդեալական հատկանիշներ մարմնավորող մարդու կերպարն է։

Այս զեկուցումների առթիվ բացված մտքերի փոխանակությանը մասնակցեցին ընկ. ընկ. Հր. Քոչարը, Ռ. Վարդազարյանը, Հմ. Սիրասը, Հ. Դյուլիքեվխյանը, Ա. Կարապետյանը և Ս. Քոչարը։

Սեսիայի երրորդ նիստում «Կլասիկ ժառանգությունը և սովետական հայ գրականությունը» թեմայով հանդես եկավ պրոֆ. Հ. Դյուլիքեվխյանը. հիմնական գծերով տալով կլասիկ գրողի ընդհանուր հատկանիշները զեկուցողն այնուհետև հանգամանորեն ցույց է տալիս, թե ինչպիսի տրադիցիաներից պետք է օգտվի սովետական գրողը։ Այնուհետև նա անցնում է կլասիկ ժառանգության գրական տեսակների զարգացման ու հարաբերության խնդրին, կանգ առնելով հատկապես սովետահայ պոեզիայի ականավոր դեմքերի վրա։ Մի շարք բնութագրումներով նա տալիս է Նարի Զարյանի, Գեղամ Սարյանի, Սողոմոն Տարոնցու, Սարմենի, Սուքեն Վահունու, Հովհաննես Շիրազի, Գուրգեն Բորյանի, Սիլվա Կապուտիկյանի ստեղծագործական դիմանկարը, ուրվագծում նրանց ստեղծագործական առանձնահատկությունները։ Սովետական գրականության զարգացման ներկա էտապում,— ավարտում է իր զեկուցումն ընկ. Դյուլիքեվխյանը,— մեր գրականագիտության և քննադատության առաջ դրված են բազմաթիվ խնդիրներ, որոնց մեջ կլասիկ ժառանգությանն առնչվող խնդիրները հետին տեղը չեն գրավում։

Վերջում «Ռուս գրականության նշանակությունը սովետահայ գրականության համար» թեմայով զեկուցում կարդաց ինստիտուտի ավագ գիտաշխատող Արտ. Կարինյանը։ Նա ցույց է տալիս, որ ռուս առաջավոր գրականության ամենապայծառ հատկանիշը եղել է հումանիզմը։ Խոշոր են ժամանակակից ռուս գրականության նվաճումները։ Սովետական գրողները նորից հրապարակի վրա են դնում դրական հերոսի պրոբլեմը, մի հանգամանք, որ հրակայական բարերար ազդեցություն է գործել սովետահայ գրականության վրա։

Զեկուցումներից հետո բացված մտքերի փոխանակությանը մասնակցեցին ընկ. ընկ. Հ. Համբարձումյանը, Հմ. Սիրասը և Ռ. Վարդազարյանը։ Վերջում հանդես եկավ Գրականության ինստիտուտի դիրեկտոր ընկ. Խորեն Սարգսյանը, որը ամփոփեց սեսիայի արդյունքները։